

թիւնը գտնում է ընթերցողը Բողենշտէղատի մօտ: Ազգագրական տեսակէտից դրանք շահեկան նիւթեր են:

Բողենշտէղատ որպէս բանաստեղծ հետաքրքրուել է նաեւ, ինչպէս խօսք եղաւ արդէն, հայ ժողովրդական երգերով ու հէքեաթներով: Արժուեան նրա տրամադրութեան տակ է դրած եղել «իր սեփական ձեռքով գրուած եւ գերմաներէն բացատրութիւններով լուսարանուած ժողովրդական երգերի մի տետր», ինչպէս նաեւ՝ Քէչիշ Օղլիի պատմութիւնը: Վերահաս մահը խանգարել է նրան՝ Բողենշտէղատին ուղարկելու նոր նիւթեր:

«Հազար ու մի օր Արեւելքում» աշխատութեան մէջ զրի առնուած (գերման թարմ.) ենք գտնում մի քանի ուրիշ նիւթեր եւս հայ ժողովրդական բանահիւսութիւնից: Այդպիսով, Հաքստհաուզէնի մօտ պահուածների հետ միասին՝ դրանք առաջին փորձերն են, թէ եւ օտար լեզուով, հայ ժողովրդական գրականութեան հաւաքման:

Առաջ բերենք այստեղ վերնագիրները գոնէ .—

1. Հայկական հէքեաթ (Ա. 175), պատմական բովանդակութեամբ (Հորոչանի եւ Հրոսիտիմէի հէքեաթը, Արտաշատ մայրաքաղաքի կեանքից):

Ինչպէս երևում է՝ Բ. այդ հէքեաթը գրի է առել Երեւանում: Գուցէ եւ Արժուեանն է նրան պատմել:

2. Նոյն հատուածի վերջում (Ա. 184) առաջ են բերուած Հայկական նախապաշարմանց երեք նմուշներ:

3. Քեչիշ-Օղլի, համաձայն Արժուեանի տուած նիւթերի (Բ. 145): Քէչիշ Օղլիի համառօտ կենսագրութիւնը հետեւում է երկու հայ աշուղների — Քէչիշ Օղլիի եւ Ալլահվերտիի — միջեւ տեղի ունեցած՝ աշուղական մըրցութեանը յատուկ՝ երկախօսութիւնը, ոտանաւոր թարգմանութեամբ:

Այդ կապակցութեան մէջ Բող. նկատում է.

«Իմ ձեռին անցած հայերէն եւ թաթարերէն երգերը մեծ մասով իրենց վրայ կրում են պարսիկ բանաստեղծութեան եւ մասնաւորա-

պէս Հափիզի աներկբայ ազդեցութիւնը: Այդ մասին Հայաստանի ժողովրդական երգիչները գուցէ եւ իրենք իսկ գաղափար չունեն: Հափիզի երգերը պարսիկ ժողովուրդի մէջ այնպիսի խոր արմատներ են դրել եւ այնչափ շատ հետեւողներ ունեցել, որ նրանց շատ պատկերները եւ արտայայտութիւնները վաղուց արդէն ժողովրդական լեզուի սեփականութիւն են դարձել: Պարսիկների դարաւոր տիրապետութիւնն էլ հայոց վրայ՝ չէր կարող չարտայայտուիլ նրանով եւս, որ ճշուածները իրենց ճշուղներից շատ բան փոխ առնէին: Դրանով բացատրել պէտք է, որ գրեթէ բոլոր թաթարերէն եւ հայերէն երգերը իրենց մէջ Հափիզեան պատկերներ եւ արտայայտութիւններ են պարունակում»:

Վրոյիշեալ հատուածին յաջորդում են Քէչիշ-Օղլիից չորս ուրիշ երգերի ոտանաւոր թարգմանութիւններ եւս:

4. Քրտական երգեր վերնագրի տակ առաջ են բերուած Արարատի քրտերի մէջ դործածական ժող. մի քանի (եօթը) երգերի ոտանաւոր թարգմանութիւններ:

Դրանք եւս պատկանում են այն նիւթերի շարքին, որ հաւաքել եւ Բողենշտէղատին է ուղարկած եղել Արժուեան: Բովանդակութեան նայելով՝ դրանք սիրոյ, դարնան, սուգի եւ ռազմական երգեր են:

* * *

Ամփոփելով մեր խօսքը Բողենշտէղատի մասին, պիտի ասենք, որ հայ ժողովրդական կեանքի եւ մասնաւոր մեր բանահիւսութեան պատմութիւնը շնորհապարտ պիտի լինի նրան, ինչպէս նաեւ՝ Հաքստհաուզէնին:

Այս օտար մարդիկը առաջիններից էին, որ հետաքրքրուեցին հայ ժողովրդական ստեղծագործութեան դանձերով եւ նրանցից փրշորանքներ պահեցին գոնէ մեզ համար: Երկուսի անունն էլ սերտօրէն կապուած է Պաշտօտը Արժուեանի հետ: Երկուսին էլ անփոխարինելի ծառայութիւններ է մատուցել հայ անուանի դրողը: Բայց այդ երկու օտարներն էլ իրենց կողմից, մասնաւոր Բողենշտէղատ, Արժուեանի մասին կենսագրութեան համար թանկագին աղբիւրներ են հանդիսանում: